ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/235

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Կապիտալ Փրոջեքթ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, Հ. Օշականի անվան թիվ 172 դպրոցի տարածքի բարեկարգման և դպրոցի շենքի պատուհանների փոխարինման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.10.2020թ.-ի թիվ 26/26-1/14833-2020 գրությամբ «Կապիտալ Փրոջեքթ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 23.09.2020թ. թիվ 01/61-18561h գրության հիման վրա, 01.10.2020թ.-ին «Կապիտալ Փրոջեքթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) գործը մակագրվել է 01.10.2020թ.-ին:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 14.09.2020թ.-ի թիվ 255-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, ընթացակարգի քննությունը 15.09.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

17.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/235 համարի ծածկագիրը:

25.09.2020թ.-ին, 08.10.2020թ.-ին և 16.10.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 08.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.10.2020թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 23.09.2020թ. թիվ 01/61-18561h գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 01.06.2020 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Հ. Օշականի անվան թիվ 172 դպրոցի տարածքի բարեկարգման և դպրոցի շենքի պատուհանների փոխարինման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով», որի վերջնաժամկետը լրացել է 15.07.2020 թվականին և Ընկերությունը չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Վերը նշված պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքների կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված աշխատանքների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Կից տրամադրվում է վերը նշված պայմանագիրը մասնակի լուծելու վերաբերյալ հիմք հանդիսացած համապատասխան փաստաթղթերի պատճենները:»:

Պատվիրատուն ներկայացրած լրացմամբ հավելել է նաև հետևյալը.

««Կապիտալ Փրոջեքթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի բողոքարկման կապակցությամբ տեղեկացնում եմ, որ նշյալ ընկերության և Երևանի քաղաքապետարանի միջև 01.06.2020թ-ին կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով պայմանագրի վերջնաժամկետը սահմանված էր մինչև 15.07.2020թ.:

Ընկերության կողմից մատնանշված 10.07.2020թ-ին ուղարկված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» պայամանագրով նախատեսված Երևան քաղաքի Հ. Օշականի անվան հ.172 դպրոցի տարածքի բարեկարգման և դպրոցի շենքի պատուհանների փոխարինման նախագծանախահաշվային փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակը վարչության էլ. փոստով չի ստացվել:

Այնուամենայնիվ, վարչության կողմից լրացուցիչ ժամանակ էր տրամադրվել նախագիծը պատշաճ ավարտին հասցնելու համար, սակայն ընկերությունն իրեն իրավունք էր վերապահել որպես խելամիտ ժամկետ 2 ամիս (այն դեպքում, երբ ըստ պայմանագրի վերջնաժամկետը սահմանված էր 45 օրացուցային օր), սակայն նույնիսկ այդ ժամկետում՝ 123 օրում (01.06.-23.09.2020թ.) նախագծանախահաշվային փաստաթղթերը դռևս վերջնական չէին ավարտվել, ձախողելով Երևանի քաղաքապետարանի 2020թ. ծրագրերը:

Նշված աշխատանքների վերջնական էլեկտրոնային տարբերակը վարչության էլ. հասցեով ստացվել է 23.09.2020թ-ին, այն էլ միայն նախագծերն՝ առանց նախահաշվային փաստաթղթերի:

Ելնելով վերոգրյալից, վարչության կողմից վերոնշյալ պայմանագրի վերջնաժամկետից 2 ամիս անց՝ 18.09.2020թ.-ին համապատասխան գրություն էր ուղղվել աշխատակազմի գնումների վարչությանը՝ լուծելու «Կապիտալ Փրոջեքթ» ՍՊԸ-ի հետ կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով պայմանագիրը, իսկ էլեկտրոնային տարբերակով վերամշակված միայն նախագծային փաստաթղթերը ներկայացվել էին 23.09.2020թ-ին՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը տեղեկագրում 22.09.2020թ-ին հրապարակվելուց հետո/»:

3. <u>«Կապիտալ Փրոջեքթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 02.10.2020թ.-ին գրությամբ դիմել է «Կապիտալ Փրոջեքթ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.10.2020թ.-ի թիվ 26/26-1/14833-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստին:

Մասնակիցը ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) միջև 01.06.2020թ. կնքվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի առարկան է հանդիսանում Երևան քաղաքի թիվ 172 դպրոցի տարածքի բարեկարգման և դպրոցի շենքի պատուհանների փոխարինման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարումը:

Երևանի քաղաքապետարանի և «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի միջև կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով գնման պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանվել համապատասխանաբար՝ 15.07.2020թ.:

«ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ն 10.07.2020թ. իր էլեկտրոնային հասցեից Պատվիրատուի էլեկտրոնային հասցեին է ուղարկել Երևանի քաղաքապետարանի և «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի միջև կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերը (էլ. փոստից ուղարկված նամակը վերահաս¬ցեագրվում է Ձեզ):

Այնուհետև «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ն, քննարկելով «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերը Երևան քաղաքի թիվ 172 դպրոցի տնօրենի հետ, վերամշակել է դրանք և 23.09.2020թ. վերամշակված նախագծանախահաշվային փաստաթղթերը կրկին էլեկտրոնային եղանակով կրկին ներկայացրել է Պատվիրատուին (էլ. փոստից ուղարկված նամակը վերահաս¬ցեագրվում է Ձեզ):

Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 01.06.2020թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով գնման պայմանագիրը Պատվիրատուի կողմից՝ թվագրված 18.09.2020թ., սակայն 22.09.2020թ. տեղեկագրում հրապարակվածի համաձայն՝ միակողմանի լուծվել է Պայմանագրերի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետնա՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակ¬ցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ Երևանի քաղաքապետարանի և «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի միջև 01.06.2020թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով գնման պայմանագիրը Պատվիրատուի կողմից 18.09.2020թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրերի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ա) Պայմանագրի լուծման համար հիմք հանդիսացած աշխատանքները Պայմանագրով սահմանված ժամկետում ուղարկելու, սակայն այդ հիմքով Պայմանագիրը լուծելու վերաբերյալ

Հարկ ենք համարում նշել, որ Երևանի քաղաքապետարանի և «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի միջև 01.06.2020թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով գնման պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանվել համապատասխանաբար՝ 15.07.2020թ.:

Այս պարագայում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք ցանկանում հրավիրել այն հանգամանքի վրա, որ եթե Պատվիրատուի համար պայմանագրերը միակողմանի լուծման համար հիմք է հանդիսացել 2.1.3 կետի «բ» ենթակետը, այն է՝ խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը, ապա վերոհիշյալի չի համապատասխանում իրականությանը:

Մասնավորապես, Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետում, այն է՝ 10.07.2020թ. (համապատասխան ապացույցը կցվում է) էլեկտրոնային փոստի միջոցով Պատվիրատուին է ներկայացվել Երևանի քաղաքապետարանի և «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի միջև կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Այնուհետև, «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ն, քննարկելով «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերը Երևան քաղաքի թիվ 172 դպրոցի փնտրենի հետ, և համատեղ քննարկման արդյունքում հանգելով այն եզրակացության, որ Պատվիրատուին ներկայացված

փաստաթղթերը անհրաժեշտ է վերամշակել, վերամշակել է դրանք և 23.09.2020թ. վերամշակված նախագծանախահաշվային փաստաթղթերը կրկին էլեկտրոնային եղանակով ներկայացրել է Պատվիրատուին:

Մասնավորապես, նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ընթացքում (այդ փաստաթղթերը Պատվիրատուին պաշտոնապես ներկայացնելուց հետո) Հ. Օշականի անվան թիվ 172 դպրոցի տնօրինության խնդրանքով վերջիններիս է ներկայացվել «Երևան քաղաքի, Հ. Օշականի անվան թիվ 172 դպրոցի տարածքի բարեկարգման և դպրոցի շենքի պատուհանների փոխարինման աշխատանքներ» նախագիծը: Քննարկման արդյունքում նախագծում տնօրինության խնդրանքով փոփոխման են ենթարկվել մետաղական ցանկապատերի, մետաղական դարպասների և մետաղական դռնակների երկրաչափական տեսքերն ու ծավալները: Եվ 23.09.2020թ. վերամշակված նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ այդ փոփոխություններով հանդերձ կրկին էլեկտրոնային եղանակով ներկայացրել է Պատվիրատուին:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ Պատվիրատուն որևէ բացասական եզրակացություն չի ներկայացրել Ընկերության կողմից 10.07.2020թ. Պատվիրատուին ներկայացված նախագծանախահաշվային փաստաթղթերի վերաբերյալ, իսկ այդ փաստաթղթերը վերամշակվել են հենց ՍՊԸ-ի նախաձեռնությամբ՝ Երևան քաղաքի թիվ 172 դպրոցի տնօրենի հետ քննարկման արդյունքում՝ վերջինիս խնդրանքով, ով, ըստ էության, չի հանդիսանում Պատվիրատու, այլ հանդիսանում է տվյալ Պայմանագրի վերջնական սպառողը (պետք է մշակվեին Երևան քաղաքի թիվ 172 դպրոցի տարածքի բարեկարգման և դպրոցի շենքի պատուհանների փոխարինման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը):

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ Պատվիրատուն չի արձագանքել նաև ՍՊԸ-ի կողմից 10.07.2020թ. և 23.09.2020թ. ներկայացված վերամշակված նախագծա-նախահաշվային փաստաթղթերին:

Մինչդեռ Պատվիրատուի կողմից պայմանագրերը լուծվել են այն Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի հիմքով, այսինքն խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Սակայն թվարկված փաստերը վկայում են, որ Ընկերության կողմից թե՛ 10.07.2020թ. և թե՛ 23.09.2020թ. ներկայացվել են պայմանագրերով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Տվյալ դեպքում՝ թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով պետական գնման պայմանագրով Մասնակցի վրա դրված պարտավորությունների ենթադրյալ խախտումը

տեղի է ունեցել Պատվիրատուի անգործության արդյունքում, վերջինս է նպաստել պարտավորությունները չկատարելու փաստի արձանագրմանը և ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար: Սույն գործում առկա փաստերով, ՍՊԸ-ի կարծիքով, հիմնավորվում է, որ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» պայմանագրով 10.07.2020թ. և 23.09.2020թ. մասնակցի կողմից ներկայացվել է Պայմանագրով սահմանված նախագծանախահաշվային փաստաթղթերը Պատվիրատուի համապատասխան էլ. փոստի հասցեին: Սակայն, Պատվիրատուն չի արձագանքել ներկայացված փաստաթղթերին, մասնակցին չի տեղեկացրել վերջինիս կողմից ներկայացրած փաստաթղթերի՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատաս¬խանելու փաստի մասին, եթե այդպիսին առկա է եղել, չի տրամադրել ողջամիտ ժամկետ, որպես Պատվիրատուի համար ընդունելի ժամկետ՝ աշխատանքը Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու համար: Այս փաստի առկայության պարագայում, միայն հնարավոր կլիներ փաստել Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետով սահմանված դրույթների կիրառման մասին, որն էլ, իր հերթին կհանգեցներ ժամկետների խախտմանը և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ մասնակցի՝ թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով պետական գնման պայմանագրի մասով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Հատկանշական է նաև այն փաստը, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ բազմաթիվ ընթացակարգեր, մասնավորապես նշենք թիվ ՍՅ-ԼՕ-2020/209 ծածկագրով ընթացակարգը, որի վերաբերյալ 16.10.2020թ. կայացրած որոշմամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանը որոշել է՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.09.2020թ.–ի թիվ 26/26-1/13698-2020 գրությամբ «Կապիտալ Փրոջեքթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՅ-ԱՕ-2020/209 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը

պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում:

Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված պարտավորությունը խախտելու մեջ, ըստ ՍՊԸ-ի, բացակայում է պարտապանի մեղավորությունը՝ փաստաթղթերը սահմանված ժամկետում ուղարկելու պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ Երևանի քաղաքապետարանը, Պայմանագրերի գնման ժամանակացուցերով նախատեսված մատակարարման ժամկետների ավարտից հետո գրեթե 2 ամիս անց, երբ արդեն բաց է

թողել Պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի ուժով պայմանագիրը լուծելու իրավունքը՝ սահմանված ժամկետի մասով, որոշում է կայացրել 18.09.2020թ. թվագրված, սակայն 22.09.2020թ. տեղեկագրում հրապարակված գրությամբ միակողմանիորեն լուծել Երևանի քաղաքապետարանի և «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի միջև 01.06.2020թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով պայմանագիրը, նույն 2.1.3 կետի բ) ենթակետի ուժով:

Այսինքն անհասկանալի պայմաններում Պայմանագրերով սահմանված ժամկետների ավարտից մոտ 2 ամիս անց Պատվիրատուն որոշում է կայացրել Ընկերության հետ կնքված պայմանագրերը լուծել և տվյալները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

բ) Պատվիրատուի կողմից պայմանագրի շնորհում չուղարկելու պատճառով նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունը ուղարկելու անհնարինության մասով

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ն զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:

Մասնավորապես՝

Ցանկանում ենք նշել, որ ճիշտ է, Երևանի քաղաքապետարանի և «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի միջև թղթային եղանակով կնքվել են «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով գնման պայմանագիրը, սակայն Պատվիրատուի կողմից www.armeps.am համակարգով պայմանագրերի շնորհում չուղարկելու պատճառով Ընկերությունը նախագծանախահաշվային փաստաթղթեր կազմման աշխատանքների վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրությունը ուղարկելու հնարավորություն չի ունեցել:

Ավելին, այս պայմանագրերի մասով www.armeps.am համակարգում ընդհանրապես դաշտ լրացված չէ:

Պայմանագրի 3.1-րդ կետի համաձայն՝ Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում, Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

Պայմանագրի 3.2-րդ կետի համաձայն՝ եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Պայմանագրի 3.3-րդ կետի համաձայն՝ եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:

Սակայն ցանկանում ենք անդրադառնալ այն փաստին, որ Պատվիրատուի կողմից պայմանագրերի շնորհում չի տրվել և Ընկերությունը օբյեկտիվոր զրված է եղել

աշխատանքների կատարման հանձնման-ընդունման արձանագրությունը ներբեռնելու հնարավորությունից, որով կապացուցվեր, որ «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի կողմից օրենքով և պայմանգրով սահմանված ժամկետներում կատարվել է նախագծանախահաշվային փաստաթղթեր կազմման և հանձնման աշխատանքները:

Մինչդեռ «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1370-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 6-ի թիվ 386-Ն որոշման 20-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի՝ www.armeps.am կայքի միջոցով պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

Նույն որոշման 21-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկն ստացած մասնակիցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:»:

Վերոգրյալը հաշվառմամբ, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Կապիտալ Փրոջեքթ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-LO-2020/235 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Կապիտալ Փրոջեքթ» ՍՊԸ-ի միջև 01.06.2020թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» (այսուհետ նաև՝ Պայմանագիր) ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Հ. Օշականի անվան թիվ 172 դպրոցի տարածքի բարեկարգման և դպրոցի շենքի պատուհանների փոխարինման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման

պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

iii. Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

iv. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ նախատեսված աշխատանքների սկիզբ է համարվում պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ:

v. Մասնակցի կողմից 10.07.2020թ.-ին և 23.09.2020թ.-ին և 23.09.2020թ.-ին էլ. փոստով Պատվիրատուի shin-barekargum@mail.ru էլ. փոստի հասցեին ներկայացվել է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները:

vi. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 22.09.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 01/61-18356 ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Կապիտալ Փրոջեքթ» ՍՊԸ-ի միջև 01.06.2020թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով պետական գնման պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից 18.09.2020թ.-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է աշխատանքների կատարման ժամկետը):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.10.2020թ.-ի թիվ 26/26-1/14833-2020 գրությամբ «Կապիտալ Փրոջեքթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխա-նատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ

իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Կապիտալ Փրոջեքթ» ՍՊԸ-ի միջև 01.06.2020թ.-ին կնքվ թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով

պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ նախատեսված աշխատանքների սկիզբ է համարվում պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 22.09.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 01/61-18356 ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Կապիտալ Փրոջեքթ» ՍՊԸ-ի միջև 01.06.2020թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով պետական գնման պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից 18.09.2020թ.-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է աշխատանքների կատարման ժամկետը):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով պետական գնման պայմանագրով Մասնակցի վրա դրված պարտավորությունների ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել Պատվիրատուի անգործության արդյունքում, վերջինս է նպաստել պարտավորությունները չկատարելուն և ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Սույն գործում առկա փաստերով հիմնավորվում է, որ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» պայմանագրով 10.07.2020թ.-ին և 23.09.2020թ.-ին Մասնակցի կողմից ներկայացվել է Երևան քաղաքի Հ. Օշականի անվան թիվ 172 դպրոցի տարածքի բարեկարգման և դպրոցի շենքի պատուհանների փոխարինման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները, Պատվիրատուի shin-barekargum@mail.ru էլ. փոստի հասցեին: Սակայն, Պատվիրատուն Մասնակցին չի տեղեկացրել վերջինիս կողմից ներկայացրած փաստաթղթերի՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանելու փաստի մասին, չի տրամադրել ողջամիտ ժամկետ, որպես Պատվիրատուի համար ընդունելի ժամկետ՝ աշխատանքը Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու համար: Այս փաստի առկայության պարագայում, միայն հնարավոր կլիներ փաստել Պայմանագրի 2.1.2 կետի «ա» ենթակետով սահմանված դրույթների կիրառման մասին, որն էլ, իր հերթին կհանգեցներ ժամկետների խախտմանը և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ գնահատելու Պատվիրատուի գործողությունների օրինաչափությունը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/47» ծածկագրով պետական գնման պայմանագրի մասով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Պայմանագրի 2.1.2 կետի «ա» ենթակետի համաձայն՝ եթե կատարվել է պայմանագրի թիվ 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք, ապա Պատվիրատուն իրավունք ունի չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը, հարկ է համարում հավելել, որ պետական գնման պայմանագրի կատարման/չկատարման արդյունքների վերաբերյալ պետք է կազմվի եզրակացություն, որն էլ պետք է լինի ՀՀ ֆինանսների նախարարի 20.05.2017թ.-ի թիվ 228-Ն «պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացության ձևը հաստատելու և ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 180-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հրամանով սահմանված պահանջների պահպանմամբ՝ ստորագրված գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից:

Կարգի 110-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուն Մասնակցին (կատարողին) չի տրամադրել ողջամիտ ժամկետ՝ անպատշաճ որակի աշխատանքը Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում Պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինելու համար, որիպիսի պայմաններում խախտվել են Պայմանագրի 2.1.2 կետի «ա» ենթակետով սահմանված դրույթների պահանջները, նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.10.2020թ.-ի թիվ 26/26-1/14833-2020 գրությամբ «Կապիտալ Փրոջեքթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/235 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**